ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

Էմիլ Գրիգորյանի անվան Երևանի Ոսկերչական գործարան ԲԲԸ-ն ՀՀ ՀԿԿ-ԷԱՃԱՊՁԲ-ՀՊ-26/18 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի				
	ֆիրմային անվանումը	ապրանքային նշանը	մակնիշը	արտադրողի անվանումը	տեխնիկական բնութագիրը
1	-	-	-	«Էմիլ Գրիգորյանի անվան Երևանի Ոսկերչական գործարան» ԲԲԸ	«ՏԱՐՎԱ ԼԱՎԱԳՈՒՅՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄ» Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն կոմիտեի Պարգևագիրը իրենից ներկայացնում է փայտից պատրաստված 200մմ (թույլատրելի շեղումը՝ /±3մմ/) լայնությամբ, 240մմ (թույլատրելի շեղումը՝ /±3մմ/) բարձրությամբ ուղղաձիգ, ուղղանկյուն, բաց շագանակագույն երանգավորմամբ արտաքին (0,5 մմ հաստությամբ) և ներքին (0,8 մմ հաստությամբ) եզրագծերով շրջանակ: Շրջանակի արտաքին և

						ներքին եզրագծերի միջև եղած հատվածը՝ մուգ շագանակագույն: Շրջանակի հիմնամասի կենտրոնում՝ 65մմ բարձրության վրա տեղակայված է 80մմ (թույլատրելի շեղումը±0,1մմ/) տրամագծով և 5մմ (/թույլատրելի շեղումը ±0,5մմ/) հաստությամբ ամրացող միակողմ պատկերով սկավառակ: Սկավառակի ոսկեգույն եզրային հատվածի լայնությունը կազմում է՝ 20մմ (թույլատրելի շեղումը՝ /±0.1մմ/) : Սկավառակը աջ և ձախ եզրագծերով զուգահեռ զարդարված է 19մմ (թույլատրելի շեղումը՝ /±0,5մմ/) լայնությամբ դափնու ոսկեգույն տերևներով, որի տրամագիծը կազմում է 120մմ (թույլատրելի շեղումը՝ /±0,1մմ/), բարձրությունը՝ 1,5մմ (թույլատրելի շեղումը՝ /±0,1մմ/): Սկավառակը և դափնու տերևները պատրաստվում են արույրից: Սկավառակի եզրագծին զուգահեռ վերևի մասում մեծատառերով, ուռուցիկ և կորաձև գրված է «ՀՀ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԿՈՄԻՏԵ» գրառումը և ներքևի մասում՝ «ՏԱՐՎԱ ԼԱՎԱԳՈՒՅՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄ» գրառումը:

					Սկավառակի կենտրոնում տեղակայված է կապույտ էմալապատ շրջան, որի տրամագիծը՝ 60մմ է (թույլատրելի շեղումը՝ /±0.1մմ/)։ Էմալապատ շրջանի կենտրոնում տեղակայված է 57մմ երկարությամբ ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի ռելիեֆային խորհրդանիշը։ Սկավառակն ամրացված է թավշյա, մուգ կապույտ հիմնամասի վրա։ Շրջանակի մակերեսն ապակեպատ է։ Հուշանվերի հետնամասում ամրացված է հենակ սեղանին դնելու համար և կախիչ։ Պարգևագրի հետ միասին, մատակարարի կողմից մատակարարվելու է նաև 33մմ լայնություն, 100մմ երկարություն ունեցող չափսերով ուղղանկյունաձև արույրե ցուցանակ՝ առանց ամրացման, որը նախատեսվում է սկավառակի ներքևում, 16.4մմ բարձրության վրա տեղադրման համար՝ պարգևագիրը ստացողի վերաբերյալ համապատասխան տեղեկատվությունը հետագայում լրացնելու նպատակով։

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

Ереванский ювелирный завод имени Эмиля Григоряна ОАО в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՀՀ ՀԿԿ-ԷԱՃԱՊՁԲ-ՀՊ-26/18 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар				
	фирменное наименование	товарный знак	марка	наименование производителя	технические характеристики
1					